

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

Պատարարութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 1.) կոպէկ.

Տէլէֆոն № 253.

Հիմնադրող Գրիգոր Արշակունի

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքակրթութեան հիմունքները.— Ներքին Տնտեսութիւն. Երեւանի մանկավարժները. Երկրաչափից փաստաթղթերի օգտին. Նամակ Շաւարժի. Նամակ Մոզգոկի. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒՅԻՆ. — Հնդկաստան. — ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իտալի ֆանատիկոսութիւնը.

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ ՀԻՄՈՒՆԻՏԵՐԻԸ

Պատկերով «Մշակ» անցեալ և ներկայ համայնքներում Ա. Ամիրխանյանի յօդուածը «Բաւի» լրագրի մէջ տպւած յօդուածներին, անհրաժեշտ ենք համարում ուղարկել հրաւիրել զէպի հետեւեալ խորհրդեր:

Մուտնական ազգաբնակչութիւնը, որ ապրում է մեր և հարեան երկրներում, որ գտնվում է բրիտանական տարրերի հետ մեր հարեանութեան մէջ, պարտաւոր է պաշտպանել իր կեանքը, որ ընդունակ լինի ոտք դնել եւրոպական կուլտուրական զարգացման ճանապարհի վրա և կարողանայ համարաշխուժիւն ստեղծել իր և շրջապատող բրիտանական տարրերի մէջ:

Ամեն մի կուլտուրական բայլ, որ մենք հետեւ ենք մեր հարեան թուրք ազգաբնակչութեան մէջ, մենք ողջունել ենք անկեղծօրէն, բոլոր սրտով: Մենք ուրախացել ենք, երբ նկատել ենք, որ թուրքերը լայն են անում կանոնաւոր դպրոցներ, սկիզբն են դնում կանանց կրթութեան, կազմակերպում են թատրոնական ներկայացումներ, հրատարակում են օգտաւէտ գրքեր և ձեռնարկներ են եւրոպական արհեստագործութիւններին: Ողջունելով այդ սկզբնական քայլերը, մենք յուս ենք տալով, որ մահմադական մեր հարեանները կամաց կամաց կընտելանան քաղաքակրթութեան կեանքի պահանջներին և ձեռք ձեռքի տուած քրիստոնեաների հետ, միասին առաջ կերթան նպատակով մեր երկրի և նրա ազգաբնակչութեան բարորդութեան:

Մեր կարծիքով մուսուլման ինտելիգեն-

ցիան մեծ սխալ է անում, երբ նա փորձեր է անում իր առաջագիմուժեան խթանները ստանալ մահմադական կրօնից և այդ կրօնի սուրբ գրքերից: Սխալ է անում, երբ նա վկայութիւններ է քաղում, որպէս զի ցոյց տալ իսլամի քաղաքակրթական ոյժը: Իսլամական մի աշխատանք է և մի և նոյն ժամանակ մի երկխոսութիւն, որով կարող է փաստել սկզբնական հետեւել և ուրիշ եղանակով կազմակերպել գործը: Այստեղ պէտք է հիմք ընդունել եւրոպական քաղաքակրթութիւնը, որը զարգացել է իր և հարեան քաղաքակրթութեան ուրիշ քաղաքակրթութիւնների իրանց կրօններով: Երբ որ եւրոպական քաղաքակրթութեան գտնած, մշակված և գիտնական վերլուծութեան ենթարկված հիմունքները զուրկ կաշխատեք կապել մահմադական կրօնների ցուցումների հետ, այն ժամանակ դուք կընկնէք մի օտարտի սթոյատիկայի մէջ, որը միայն կը խառնա փրկութիւն մարդկանց մարքերը: Մահմադական կրօնը և նրա գրքերը, իբրեւ պատմական երեւոյթներ, ենթարկվել են և այսուհետեւ ևս կենթարկվեն մանրամասն և բազմակողմանի քննադատութեան: Եւ չը պէտք է սպասել, թէ ի՞նչ կասէ այդ քննադատութիւնը և թէ արդեօք նա կը գտնէ այդ կրօնի մէջ կուլտուրային նպատակով կէտեր, որպէս զի ձեռնարկվին մի շարք միջոցներ առաջադիմութեան գործը փարելու համար:

Իսլամ հետեւ ճանապարհ է և առեւծուածական: Իսլամ վեճեր և թիւրքիմացութիւններ յարուցանող մի ձեռնարկութիւն է: Աւելի նպատակաւոր մար և արդիւնաւէտ կը լինի ուղիղ դիմել եւրոպական քաղաքակրթութեան ցուցումներին և սիւստեմական կերպով իւրացնել այն հիմնական տարրերը, որոնք այնքան փրկարար են եղել լուսաւորված մարդկութեան համար թէ եւրոպայում, թէ Ամերիկայում, թէ Եսպանիայի նման նոր արթնացած երկրում և թէ նոյն իսկ վայրերի Աֆրիկայի ցամաքում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒՅԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԸ

«Մշակ» ներկայ համարում անփոփոխ տպագրում ենք Երեւանի թեմական դպրոցի ուսուցիչների նամակը:

Երեւանի պ. պ. Մանկավարժները մի սքանչելի միտք են յղացել—հայտնել «Մշակ» խմբագրութիւնը եւ յետոյ ասել մեզ, հապա, եթէ քաղութիւն ունիք, տպագրեցէք մեր հայտնանքը: Իրանք, այդ մանկավարժները, թուով 14 հոգի, ի հարկէ, ահապէս քաղութիւն են գործել, հայտնելով մեզ: Բայց մենք տպագրում ենք այդ նամակը ոչ թէ որ եւ է քաղութիւն ցոյց տալու համար—ծիծաղելի կը լինէր նախանձել Երեւանի մանկավարժների քաղութեան—այլ աւելի լուրջ նպատակով: «Մշակ» մէջ մենք շատ թղթակցութիւններ ենք տպել Երեւանի թեմական դպրոցի գործերի մասին. 14 մանկավարժների այս նամակը գալիս է ընդհանուր պատկերը լրացնելու համար: Նա հարկաւոր էր, որպէս զի ընթերցող հասարակութիւնը աւելի եւս համոզվի, թէ որքան թշուառ է Երեւանի թեմական դպրոցը...

Եւ իրաւ Տեառն այդ 14 մանկավարժներին: Լրագրի մէջ տպւում են տեղեկութիւններ, այդ տեղեկութիւնները, եթէ սխալ են, կարող են հերքվել նոյն լրագրի մէջ: Այս ճամբարութիւնը արդէն զուլուսների երկրում էլ պէտք է յայտնի լինի, բայց դեռ յայտնի չէ Երեւանի մանկավարժների կաճախին, չը նայած, որ այդ մանկավարժները պիտի լինեն առաջին հասկացողները և ուրիշներին հասկացողները: Զէ, թշուառ չէ Երեւանը...

Երեւանի մանկավարժները մեզ մեղադրում են, որ մենք մեր թղթակցներին ենք հաւատում: Բայց ում հաւատանք. մի՞թէ իրանց, այդ մանկավարժներին: Նայում ենք այդ 14 անուններին եւ ահա ինչ ենք գտնում.—Մ. Տէր-Սարգսեան (Սուրբաւան արքեպիսկոպոսի եղբոր որդին), Ս. Սմբատեան, Զ. Յակոբեան, Մ. Տէր-Մկրտչեան այն իսկ ուսուցիչներն են, որոնց անցեալ տարի արձակել էր հոգաբարձութիւնը, բայց որոնք չը կամեցան հեռանալ եւ պատճառ դարձան հոգաբարձութեան հրաժարվելու եւ այն բոլոր անցքերին, որոնք տեղի են ունենում Երեւանում թեմական դպրոցի շուրջը: Այս պարոններին արտապայտած գլուխները մեզ համար ոչինչ նշանակութիւն չունեն, ընդհակառակը՝ մենք

սուրբ էսմէի կուրծքը խրեց:

4) Մի ուրիշ քաջ լեզուանի, հրէայ բանաստեղծ Բէքար Իրան էլչէֆը, որ կծու ոտանաւորներով վերադարձել էր մարդարէի պատիւը, սրան էլ նոյնպէս Մուհամմէդի ուղարկած մարդիկը, որոնցից մինքն քեզաբն ազգակից էր, զիչեղել իսթեփութեամբ սպանեցին ու գլուխը բերին դաշտում իրանց սպասող մարդարէին տուին, որ տեսնելով ասեց «փառք Աստուծոյ»:

5) Երբ Մուհամմէդ Օռոյի պատերազմում իր հօրեղբայր Համզային վիրաւորված ու սպանված տեսաւ, բարկացաւ ու ասաց. «Եթէ Աստուած Դուրեշյի վրա ինձ յաղթութիւն տայ, եւ եօթնասուս մարդ իմ հօրեղբայր Համզայի պէս պէտք է վիրաւորել ու սպաննեմ»:

6) Մուհամմէդ սրանից յետոյ հրէայ Բէնի-Գորէյզէ գեղի հետ պատերազմ ունէր, սրանք պաշարվեցին իրանց բերդում, բայց Ուլա գեղի միջոցով թեմալը յուսալով թէ Մուհամմէդը երանց զի տայ, անձնատուր եղան Մարգարէն Սասնի անունով մէկին հարցրեց, թէ սրանց ինչ անել պէտք է, եւ նա էլ ասաց՝ կոտորել Մուհամմէդը Մէղիկայի հրապարակում այդ գեղի բերած բոլոր հրէաներին, 700 հոգի, սպանեց եւ նրանց կանանց ու երեխաներին աւարեց իբրեւ գերի: Այս զէպերը գրված են «միսան-իւլ-իյուն», «Բեր-իսմիա» եւ «Միթթ-իւր-ըրուլ» նշանաւոր գրքերի մէջ: Մահմադական նախնի պատմիչները վկայում են, որ իրանց մարգարէն անձամբ 27 պատերազմ է վարել եւ 38 անգամ էլ ասպատակներ են ու-

շատ կը վշտանայինք, եթէ նրանք մի այլ զգացմունք ունենային զէպի մեր թղթակցը եւ զէպի մեզ:

Բացի այդ նշանաւոր չորսից մենք կանչ ենք առնում մի անունայն լրագրի. եթէ չենք սխալվում Ա. Չիլիկարեան անցեալ տարի Շուշու թեմական դպրոցում էր: Եթէ դա այն Չիլիկարեանն է, ուրեմն դուրս է գալիս, որ «Մշակ» նրա համար լաւ էր անցեալ տարի, երբ հարկաւոր էր, որ նա իրան հրատարակէ Բենիկեան խմբի գոհ, պաշտպանէ իր մանկավարժական պատիւը: Այս տարի է միայն պ. Չիլիկարեանը հասկացել, որ աւելորդ է օրինաւոր, կրթված մարդու նման պաշտպանվել, այլ բաւական է միայն միանալ չորս նշանաւորներին, որոնք սարի պէս կը պաշտպանեն նրան: Համաձայն ենք եւ խորհուրդ ենք տալիս պ. Չիլիկարեանին այդպէս էլ տանել իր գործերը:

Ահա ուղեւոր են մեր դատաւորները, ահա ուղեւոր են, որ գալիս են մեզանից քաղութիւն պահանջելու «Մուտ է», «զգվում ենք»—ահա մանկավարժների ամբողջ զէպը, ամբողջ պաշտպանութիւնը: Ծիծաղելի զէպ...

Իսլամաւորներն չէ, դա արդարացում չէ: Ուրախ ենք, որ փաստեր չունէք, այլ միմիայն հայտնաւոր: Իսկ եթէ «Մշակ» ձեզ զուր չէ գալիս, դա շատ հասկանալի է. ձեր հոգեբանութիւնը հիմադրի կերպով բացատրել է Կրիլովը իր «Կապիկ եւ Հայելի» առակի մէջ: Հայելին մեղաւոր չէ, պարոններ, եթէ ձեր զէպերը ծուռ են:

Յամենայն զէպս, դուք հետեւողական էք. ձեր այս նամակը ամենից լաւ է ապացուցանում, որ դուք իրաւունք ունիք կատարելու հայելու վրա...

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Երկրաչափից փաստաթղթերի օգտին ստացանք հետեւեալ նուիրատուութիւնները.

Վ. Երիւն-Ա. Գուշիսի, 50 ռուբլի, որ ժողովել է տիկին Ե. Աղամիրզեան հետեւեալ տիկիններից եւ օրերորդներից. Ս. Տէր-Մկրտչեան 5 ռ., Վ. Բէգլարեան 3 ռ., Ա. Ներսիսեան, Ն. Հախնազարեան, Զ. Ներսիսեան, Զ. Շահնազարեան, Թ. Սիմոնեան, Ո. Աւետիսեան, Ե. Սաֆրազեան եւ Օ. Սաֆարեան—2 աւանի ռ., Վ. Մնացականեան, Բ. Աղամիրզեան, Բ. Արամ-խանեան, Թ. Տէր-Կարապետեան, Ա. Ներսիսեան, Մ. Էլչիքէզեան, Ս. Արեան, Բ. Յակո-

ղարկել ամեն կողմեր:

7) Իսլամը 1300 տարվայ միջոցին աշխարհիս վրա որքան երկիրներ է աւերակ արել, որքան հազարաւոր եւ հարկի հազարներով մարդիկ կոտորել,—մի կարող է այդ բոլորը գրել Ահա-գին հատորներ պէտք էին դրա համար: Բոլորովին սխալ է, որ «Բաւի»-ի յօդուածագիրը իսլամի արհեստագործական դարեկուսը թիւրք-թաթար գեղի իշխանութեանն է ընծայում: Իսլամի հիմքը արիւնով է զրգում եւ նրա նպատակն ու նշանաւորը, ինչպէս որ Դուրանի բազմաթիւ համարները եւ Մուհամմէդի կեանքը վկայում են, սուրն է, սուրն է եւ սուրը: Մուհամմէդը ինքը թոյնով մեռաւ, նրա յաջորդը՝ Աբուբէքրը նոյնպէս, նրա յաջորդը՝ Օմարը սրով սպանվեց, նրա յաջորդ Օմարը բուն իսլամ-ների սրով խողովեց, Ալին նոյնպէս, Օսմանը նմանապէս, Հուսէյնը նմանապէս, որի մահը ամեն տարի շախսէյով ներկայացնում են: Սուր առնողները սրով պիտի ընկնեն սկզբունքը շատ որոշ կերպով հաստատված է իսլամի պատմութեան մէջ: Դեռ յիսուս տարի չանցած մարգարէի մահից, նրա փեսան Ալին նրա կնոջ Ալյաի հետ մի խիտ արիւնատ պատերազմ ունեցաւ: Ալին մեռնելիս ասեց, որ իր ձեռքով 10,000 մարդ է սպանել: Հէճճաճ իշխանը իր իշխանութեան ժամանակ 120,000 հոգի էր մորթել եւ բանտում էլ 80,000 մարդ եւ կնիկ մեռցրել:

Ուր որ իսլամը ոտք դրել է, այն տեղը կամ զնաւով է մի որ եւ է կերպով կամ բոլորովին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՍԼԱՄԻ ՃԱՆԱՏԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

Մուհամմէդը ստիպեց հալածանքի պատճառով Մէքքէից Մէդինա փախչել եւ այդ քաղաքների տեղիքը ուղում էր մէքքէցիներից վրէժ առնել: Մի օր մի փակ նամակ տուեց Աբուլլա Իբնը Ճաֆրին, որ 8 կամ, ինչպէս ուրիշներն ասում են, 12 հոգով գնաց եւ այն նամակի բովանդակութիւնը ի գործ դնէ: Մարդը գնաց իր ընկերներով: Բէթլեմ-Նէկլէլ աւելի հովիտը Թայֆի ու Մէքքէի մէջտեղը: Նամակը բացեց, կարդաց ու սպասեց Դուրեշյի կարաւանին, որ այնտեղով պիտի անցնէր: Որովհետեւ Բէճէք սուրը ամիսն էր ու այդ ամիսը ամեն կուր ու պատերազմ դադարում էր արաբների սովորութեան համաձայն, այն կարաւանի մարդիկը, որ չորս հոգի էին, զէպ չուէին: Մուհամմէդի ուղարկած մարդկանցից մէկը կարաւանի մարդիկը խաբելու մտքով գլուխը ածիլեց, որ ուխտաւորի պէս երեւայ: Երբոր այն 4 վաճառականները ապահով եղան, որ վտանգ չը կայ, յանկարծ նրանց վրա յարձակվեց Աբուլլա, նրանցից մէկին սպանեց, մարդկանց գերի բռնեց, կապեց, չորրորդը փախաւ: Յետոյ նրանք բոլոր կարաւանը իբրեւ աւար բերին, Մուհամմէդին յանձնեցին: Ամբողջ

Электронпечатня Груз. Менаж. Т—ва. Б.-Ванская 14.